# ԲԱՐԻ ԱՐԱԳԻԼ

*Խօսք՝ Ա. Գրաշի*
*Երաժշտ.՝ Ալ. Հէքիմեան*

Ես ոչ անտուն եմ, ոչ էլ տարագիր,
Ունեմ հանգրուան.
Ունեմ օթեւան,
Ազատ, հայրենիք, երջանիկ երկիր:

Կրկ.- Բարով արագիլ, բախտի արագիլ,
Արագիլ գարնան,
Արագիլ ամրան,
Իմ տան մօտ ապրիր, բարի արագիլ,
Բոյն հիւսիր ծառին,
Բարդու կատարին:
Իմ մանուկների աստղերն են ցոլում,
Լոյսով անթառամ,
Շողերով վառման,
Վշտըրս դառան ծաղիկներ փայլուն:

Կրկ.- Բարով արագիլ, բախտի . . .

Արագիլ, ինձ հետ գովերգիր.Եայլա ու վրան,
Հանդեր հոտեւան,
Արտեր, այգիներ, մանուշակ երկինք:
Կրկ.- Բարով արագիլ, բախտի . . .